

ՏԱՍՆ ԵՒ ԵՌԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաբաբանչիւր բառին 2 կոպէկ:

Le journal arménien «MSCHAK» est mis gratuitement à la disposition des visiteurs de l'Exposition Universelle de 1889 à Paris, au bureau des Renseignements Commerciaux, à la Section des Colonies françaises, Esplanade des Invalides.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կովկասեան կառավարչապետի չրջաբերականը. Երևանի կեանքից. Նամակ խզողից. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անդրկական լուրերի ժողովը. Տեղեկութիւններ թիւրքաց Հայաստանից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱՎԻՆՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. Հայոց Բարեգործական ընկերութիւնը և նրա Բաժնուի ճիւղը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

Կովկասեան կառավարչապետը ուղարկել է պ. պ. Նահանգապետներին հետևեալ չրջաբերականը 1889 թ. ապրիլի 26-ից № 3716:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Մակարի յարուցած միջնորդութեան համաձայն բացատրելու այն խնդիրները, որոնք վերաբերում են հայ-լուսաւորչական կրօնի դաստաւութեանը պետական ուսումնարաններին մէջ, ինչպէս և 1884 թ. փետրվարի 16-ին հրատարակած կանոններին հայ-լուսաւորչական ծիսական ուսումնարաններին մասին և այդ կանոնները լրացնող բացատրութիւններին, որոնք յայտնված են Կովկասեան երկրի պ. պ. Նահանգապետներին և գլխաւորներին 31 մարտի 1886 թ. № 3217-ով ուղարկւած իմ չրջաբերականով, Թագաւոր Կայսրը, այդ հարցերի մասին կայացած առանձին խորհրդակցութեան արձանագրութեան ամենհայտակ դեկլարացիան համաձայն անցեալ մարտ ամսի 22-ին բարեհաճեց Բարձրագոյն հրամայել.

1) Թոյլատրել, ժամանակաւորապէս, մինչև որ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ԲԱՌՈՒՄԻ ՃԻՒՂԸ

Ա.

Բանաւոր արարածի մէջ՝ իր նմանին օգնելու միտումը սկսած է այն ժամանակից, երբ մարդկային ցեղն անասնական վիճակից բարձրանալով, խմբովին ապրելու, հասարակութիւն կազմելու պահանջն զգաց: Այդ միտումը մի կերպ բարոյական պարտաւորութիւն էր, որ նախ բնականորէն ծագեցաւ և ապա տակաւ արմատանալով, քրիստոնէութեան ձեռքով նուիրադրովեցաւ: Իսկ այժմ նա այնքան հիմնված և տարրական է դարձած, որ նոյն իսկ քաղաքակրթութեան ստորին աստիճանի վրա կանգնած ժողովրդի համար՝ այդ պարտականութիւնը չը զգալու, և զանց անելը՝ մարդկութեան սահմանից դուրս գալ է նշանակում: Այդ զգացումից զուրկ եղող մարդկային էակը մօտենում է իր նախնական, անասնական վիճակին: Հետևաբար՝ ընկածին թև տալու, տկարին օգնելու, թշուառին դարձնելու և վշտացեալը մխիթարելու, լինի դա մտաւորապէս, բարոյապէս և նիւթապէս, անհրաժեշտ պէտքն ու կարևորութիւնը՝ գէթ տեսականապէս, այնքան ճանաչված է, որ նրան բացատրելն անուշադ անելոցը աշխատութիւն պիտի համարվի մեր կողմից: Մարդու մէջ երբեք միտում չկա, յոռի տրամադրութիւնները չեն զարգա-

կը կայանայ այդ մասին մի առանձին կարգադրութիւն, ժողովրդական լուսաւորութեան միջնորդի, ներքին գործերի մինիստրի և կովկասեան կառավարչապետի համաձայնութեամբ, հայ-լուսաւորչական դաստաւութեան կրօնադիտութեան դաստաւութիւնը կովկասեան ուսումնարանական շրջանի միջնակարգ դպրոցական հաստատութիւններին մէջ, հայերէն լեզուով:

2) Հայ-լուսաւորչական եկեղեցական ծիսական ուսումնարաններին մէջ ուսնաց լեզուի, Ռուսաստանի աշխարհագրութեան և պատմութեան առարկաների դասատուներ պէտք է նշանակվեն միայն այն անձինք, որոնք ունեն որոշեալ ուսուցչական ցենդ. բայց թոյլատրել կաթողիկոսին այդ ուսումնարաններին մէջ աւանդվող առարկաների համար ընդունել ուսուցիչ նաև վերոյիշեալ ուսուցչական իրաւունքը չունեցող անձանց, միայն այն պայմանով, որ այդ բացառութիւնը կարող է տեսնվի մինչև 5 տարի: Այդ ժամանակամիջոցից յետոյ, ուսուցչական իրաւունքը չունեցող անձինք այլ ևս չեն ընդունվի առհասարակ իրեն դասատու այդ ուսումնարաններին մէջ:

3) Բացատրել, որ ընդհանուր կանոնով եկեղեցական-ծիսական դպրոցներին ուսուցիչներին նշանակում և արձակումը կատարվում է անմիջական կարգադրութեամբ հայ-լուսաւորչական հոգևոր իշխանութեան, որը, ի դէմս թեմական առաջնորդներին, պարտաւոր է հազորդել Կովկասեան ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուին ուսուցիչներին անձնական կազմակերպութեան մէջ եղած բոլոր փոփոխութիւններին մասին: Եթէ հարկաւորվի հետաքննել եկեղեցական-ծիսական դպրոցներին այնպիսի ուսուցիչներին և ուսուցչական չունեցողներին, որոնք իրանց գիտութեամբ և ուրիշ մանկավարժական յատկութիւններով, կամ վարքով չեն համապատասխանում իրանց ստանձնած պարտաւորութեան, այն ժամանակ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն նախապէս այդ մասին դիմում է տեղական հայ-լուսաւորչական թեմական առաջնորդին: Եւ եթէ այդ մասին համաձայնութիւն չը կայանայ հոգաբարձուի և առաջնորդի մէջ, այն ժամանակ հոգաբարձուն պարտաւոր է անմիջական դիմուցանել Կովկասի կառավարչապետին, որը յարաբերու-

նում, չեն տիրապետում, այլ համեմատաբար 25 եղած մի ոճրագործ, որ իր կենաց մէջ, գէթ վերջին վայրկեանին, բարւոյ կամ բարի գործի մասին իր տրամադրութիւնը ցոյց չը տայ. և կարելի չէ, վասն զի նոյն իսկ բնաստական օրէնքով մարդ ի բնէ ունի թէ բարւոյ և թէ չարի սերմերն հաւասարապէս:

Յիշեալ զգացումը գործով ցոյց տալը, նրան ի կատար ածելը կոչվում է բարեգործութիւն:

Մեզանից ամեն մէկն առանձին վեր առած, պարտաւոր է իր նմանի, որ անձուկ մտքով նշանակում է իր սերնդեան, մտաւոր կարողութիւնը հոգալ և իր ընկերի բարոյական և նիւթական պակասութիւնը դարմանել: Այս՝ անհատական բարեգործութեան սկզբունքն է: Բայց ինչպէս ամեն առթիւ, նոյնպէս և այս դէպքում, առաջագրված նպատակին դիւրաւ հասնելու, նրա սահմանն ընդարձակելու և նրա աջողութիւնն ապահովեցնելու համար, մարդիկ միացնում են մասնաւոր անհատների, առանձնականների աշխատութիւնը, և այս էլ ընկերական կամ հասարակական բարեգործութեան սկզբունքն է:

Այս զգացմամբ է առաջնորդված եղել մեր հասարակութիւնը հիմնելով 1881-ին «Հայոց Բարեգործական Ընկերութիւնը»:

Ժամանակի առաջացման հետ միասին՝ ընդարձակվում են, մեծանում են նրա պատճառած բարիքն ու չարիքը: Այն ինչ որ քանի մի դար առաջ սովորական և բնական էր երևում ժողովրդեան, այժմ ըստ հանգամանաց ժամանակին,

թեան մէջ է մտնում այդ առիթով կաթողիկոսի հետ, յետոյ ձեռք է առնում, ըստ իր հայեցողութեան, համապատասխան միջոցներ:

Այդ կանոնը միակերպ տարածվում է և թեմական տեսուչների վրա:

4) Յոյց տալ Բարձրագոյն Պատրիարքին, որ Հայաստանի պատմութեան և աշխարհագրութեան առանձին դասաւորութիւնը պէտք է հանվի հայ եկեղեցական-ծիսական դպրոցներում աւանդվող առարկաների շարքից, իբրև օրէնքով չը թոյլատրված առարկայ: Ընդ մին նրա անմիջական կատարման հսկողութիւնը յանձնել մերձակար ուսումնարանական իշխանութեան:

Այդ վերոգրեալ Բարձրագոյն հրամանի մասին առաջագրված է ի կատարումն և ի դիմակարութիւն թէ ուսումնարանական շրջանին և թէ Նորին Սրբութեան Մակար Կաթողիկոսին:

ԵՐԵՒԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

Անձնականապէս ծանօթ լինելով Երևանի քաղաքային գործերին, մենք «Մշակի» 50-որդ համարում արդէն առիթ ունեցանք խօսելու Երևանի քաղաքային մասին և ցոյց տուցինք, թէ թեկնածուներից որն է աւելի համակրելի և արժանաւոր քաղաքապետի պաշտօնի համար: Յայտնեցինք նոյնպէս և այն միտքը, թէ թեկնածուներից մէկը, այժմեան քաղաքապետն պ. Գեղամով, ոչ միայն համակրելի չէ վերընտրվելու, այլ մինչև անգամ համարձակութիւն կը լինի նրա կողմից նորից իր անունը տուփի վրա դնել: Այդ խօսքերը մենք ասեցինք, հիմնվելով «Մշակում» և «Новое Обозрение» լրագրիներում լայն տեսած փաստերի վրա, որոնք ներկայացնում են պ. Գեղամովի գործունէութեան մասին կողմերը և որոնք ունեցել են շատ ցաւալի հետեանքներ:

Սակայն յիշեալ տեղեկութիւնները պ. Գեղամովի քաղաքապետութեան կեանքից մենք չենք նշանաւոր չենք համարում, համեմատելով այն իրողութիւններին հետ, որոնք կատարված են նրա քաղաքապետութեան ընթացքում: Ահա այս և պատճառը, որ մենք մեզ համար սուր պարտաւորութիւն ենք համարում մեր ձեռքի տակ ու-

իրեն աղէտ և թշուառութիւն է ընդունվում ոչ թէ միայն ներկայի, այլ և ապագայի նկատմամբ: Փոքր ի շատեց զգայուն, ինքնաճանաչ հասարակութիւնը չէ աշխատում միայն թշուառութիւնն առժամայն դարմանելու, այլ հետազոտում է աղբիւրները և ջանադիր է լինում նրանց ըստ կարելոյն անհետացնելու և նոյններին ժառանգ չանելու իր ապագայ սերունդը: Անցած են բարեբաղդաբար այն դարերը, երբ ամեն աղէտ՝ Վասն մեղաց մեքոց՝ էին դալիս. այդ անցեալի ներկան ուրիշ տեսակէտով է ընկնում իրերը:

Բարեկրթական ընկերութիւնը հիմնված է հաւաքական ոյժով օգնելու համար մեր հասարակութեան բարոյական, մտաւոր և նիւթական կարողութեան չափ պահպանելու նրա գոյութիւնը, և քաջալերել նրա գործը: Ըստ արժանիքի զնահատելու համար այդպիսի մի ընդարձակ ձեռնարկութեան բովանդակ կարևորութիւնը բաւական է աչքի առջև բերել այն բաղադրի միջանջները, որ ունեն մեղանից ամեն մէկն առանձին և ամբողջ հասարակութիւնը կամ նրա այս և այն դասակարգը խմբովին:

Մեր ուսումնարանները հաստատուն եկամտի աղբիւրներ չունեն իրենց կրթողական գործն առաջ վարելու,—բարեգործական ընկերութիւնը պաշտպանում է նրանց:

Մեր չքաւոր դասակարգը բաւականաչափ միջոցներ չունի նոր դպրոցներ հիմնելու,—ընկերութիւնը նիւթականապէս նպաստում է նրանց:

Մեր ժողովրդի մէջ արհեստներն ընկած, յե-

նեցած շատ աղքատ և զօրեղ փաստերից երևան հանել և՛ այս անգամ մէկը, յուսադիր լինելով, որ այդ կօշիկ երևանցիներին լաւ իմանալու իրանց չարը և բարին, և զգոյշ լինելու քաղաքի դեկը Գեղամովի նմանների ձեռքը տալուց փող ուրեմն փաստը խօսէ:

1885 թ. փետրվարի 15-ին մի քանի ձայնաւորներ գրաւոր յայտարարութեամբ առաջարկում են քաղաքապետին—պ. Գեղամովին—միջնորդել ուր հարկն է, Երևանում պետական բանկի բաժին բանաւոր համար Աւելորդ է ասել, որ ամեն մի մարդ, որքան էլ չկամ և չարակամ լինի, հոգով և սրտով կը ցանկանայ այդպիսի մի օգտաւէտ հիմնարկութեան իրագործումը, բայց տեսէք ինչ է անում պ. Գեղամով: Նա թէ և խոստանում է ձայնաւորների խնդրքը կատարել, բայց թող թին ոչ մի ընթացք չէ տալիս և յայտարարութիւնը մնում է առանց ուշադրութեան ամբողջ մի տարի և չորս ամիս, այսինքն փետրվարի 15-ից 1885 թ. մինչև յունիսի 13-ը 1886 թ. Գեղամով այդ յայտարարութիւնը բոլորովին լայն չը տեսնել, եթէ քաղաքապետը Գեղամովի բացակայութեան ժամանակ ուշադրութեան չարակամացնէր այդ բանը քաղաքապետի պաշտօնական տար պ. Բուրխալեան, որը առաջարկում է պ. Նահանգապետին այդ յայտարարութիւնը և խնդրում է միջնորդել բանկի բաժնի բացման մասին Պ. Նահանգապետի կողմից այդ յայտարարութիւնը առաջարկվում է ուր հարկն է: Այդ հարցի վճիռը կայացնելու համար, պահանջվում են մի քանի ստատիստիկական տեղեկութիւններ վաճառականութեան արտահանութեան և քաղաքի կեանքի այլ և այլ ճիւղերի վերաբերութեամբ, ինչպէս պետական բանկի վարչութեան, նոյնպէս և պ. Կայառնովի կողմից, որը պետական բանկի թիֆլիսի բաժնի կառավարչին է: Բայց պ. Գեղամով լուր է և մինչև այսօր էլ պատասխան չէ տուել, չը նշանակում որ հարցի վճիռը կախ է միայն յիշեալ տեղեկութիւններից: Նա ուշադրութիւն չէ դարձնում մինչև անգամ և այն ժամանակ, երբ պ. Նահանգապետը երկու անգամ գրաւոր առաջարկութիւն է անում (մարտի 22-ին 1888 թ., № 849 և սեպտեմբերի 18-ին նոյն թվ. № 3046) և երբ ձայնաւորները երկու ան-

տառնաց կամ սահմանափակ դրութեան մէջ են, —ընկերութիւնն օժանդակում է նրանց տարածման ու յառաջացմանը:

Մեր ուսանողները չքաւորութեան պատճառով անկարող են լինում իրանց կրթութիւնը շարունակելու,—ընկերութիւնն օգնում է իրանց ուսման ասպարեղի մէջ:

Մեր ժողովրդին ընկերացնութեան պահանջ ունի, պակասում են նրան պատշաճաւոր գրքեր, —ընկերութիւնը հրատարակում է յարմարագոյն գրուածներ նրանց համար և բաց է անում տպարաններ ու ընկերացարաններ:

Մեր գրագէտները միջոց չունեն իրանց աշխատասիրութիւններն ի լոյս ընծայելու,—ընկերութիւնը յանձն է առնում այդ:

Մեր չքաւոր, տնակի դասակարգը տառապում է հիւանդութեամբ, անընդհատ և անօգնական է մնում նրա տկար կամ ծեր մասը,—ընկերութիւնը հիմնում է հիւանդանոցներ և աղքատանոցներ նրանց համար:

Մեր երկրում պատահում են սով, հրդեհ, տարափոխիկ հիւանդութիւններ, թշուառութիւնը տիրում է ժողովրդեան մէջ, աղէտները կոտորածներ են գործում,—ընկերութիւնն օգնում է տառապեալներին, մարտնչում է աղէտի դէմ առնալով կարելի միջոցներով: Վերջապէս՝ մեր այլ ընկերութիւնները կարողութեան օժանդակութեան իրանց ազգօգուտ նպատակների աջողութեան համար,—ընկերութիւնը նպաստում է նաև նրանց:

Արդարեւ ընդարձակ գործ, բազմակողմանի ընդպատ և բազմաճիւղ ձեռնարկութիւն, թէ և ըստ

գամ դուռնի նիստերում պահանջում են ընթացք տալ այդ գործին:

Մենք չենք իմանում, թե ինչու է պ. Գեղամով ձգձգել մինչև այժմ բանկի բաժնի իրազեկման հարցը, թե՛ն դժուար է երևակայել այն բազմակողմանի օգուտները, որ կարող է տալ Ներսիսի նահանգին և Ներսիս քաղաքին այդպիսի մի հիմնարկություն, ինչպես է բանկի բաժնի, այն էլ այնպիսի քաղաքում, որ կենտրոն է բերքավոր և արտահանութեամբ վերին աստիճանի հարուստ նահանգի: Ահա այդպիսի քաղաքում, չնորոգվող պ. Գեղամովի անհոգութեան կամ անլի ճիշդ է ասել, նրա չկամութեան, մինչև այժմ բանկի բաժնի չէ բացվել, այն ինչ այդ հիմնարկությունը արդեն գոյություն ունի առկա փոքր քաղաքներում, ինչպես են Փոթի, Բաթում, Պիատիգորսկ և այլն:

Ներսիս հանդիմանում այդ իրողությունը, որ ուղղակի վերաբերում է պ. Գեղամովի գործունեությանը ի վնաս քաղաքին, մենք կրկնում ենք և էլի առիթ կունենանք կրկին, թե Ներսիսի համար հարկաւոր է մի խելո՞ւ ունեցող քաղաքագլուխ, նրա օգուտները ցանկացող անձնավորություն, և ոչ թե պ. Գեղամովի նման մի մարդ, որը այսպես թէ այնպես վնասում է քաղաքի շահերին: Առ այժմ այդքան. մի ուրիշ անգամ մենք կրկին կը դիմենք փաստերին:

ՆԱՄԱԿ ԻԳՎԻՐԻՑ

Մայիսի 3-ին

Քանիցս առիթ է եղել խօսելու խղիւղի հայոց երկուսու դպրոցների անապահով վիճակի մասին և միշտ էլ ասվել է, որ եթէ խղիւղից միանան և ձեռք ձեռքի տուած աշխատեն, հաւատացած ենք, որ դպրոցների նիւթական վիճակը նախանձելի կը դառնայ: Թողնենք մի կողմ այն փողերը, որ այս և այն մարդը կերել է, ուշադրութիւն չը դարձնենք այն բանի վրա, որ եկեղեցու զրաւագլուխը (մօտ 7,000 ր.) կորչելու վրա է, որից դպրոցը տոկոս պիտի ստանար, մեր ուշադրութիւնը դարձնենք նոր միջոցների վրա, որոնցից ստացած արդիւնքը տարւոյ ընթացքում կարող է 1,500—2,000 ր. հասնել:

Այդ նոր միջոցներն են՝ գինեւանքի միացնելը և մի կամ երկու հոգուն կապալով տալը: Սա կունենայ երկու օգուտ. նախ՝ որ ժողովրդի մէջ կը պակասի քրոջը չափով խմիչքների գործածութիւնը և երկրորդ՝ որ փոխանակ այժմ 10 գինեւանքից յօգուտ ուսումնարանի 200 բուրդի վերցնելու (հասարակական վճռով իւրաքանչիւր գինեւանքն պարտական է 20 բուրդի տալ դպրոցին) կարելի է 500—700 ր. ստանալ, ինչպէս որ կողք գիւղին է արել:

Խղիւղում օտար տեղացի թուրք վաճառական-

ներքեան այդ չէ նշանակում անշուշտ, որ ընկերութիւնը միանգամայն և միաժամանակ զոհաբերում է տալիս այն բոլոր պահանջներին: Ունենալով իրաւունքներ ընդհանուր ծրագրեր իրականացնելու, նա գործարարում է և կը զործադրէ նրա այն կէտերը, որոնք հարկաւորութեան մէջ առաջին տեղն ունենէ չա կը զոհացնէ և կարող է զոհացնել այն բազմադիւրի կարծողութիւնները՝ միջոցների ոյժի ներածին չափ և ըստ պարագայի:

Բ.

Մի նշանակուող առաւելութիւն և իրաւունք ունի Բարեգործական ընկերութիւնը, որից հարկաւոր է, որ օգուտը քաղեն մեր կողմանէն բոլոր քաղաքները: Ընկերութիւնը սահմանափակված չէ թիֆլիսում, նրա գործողութեան ասպարէզը ասարածվում է ամբողջ կովկասի վրա: Կովկասում բնակվող ամեն հայ կարող է անդամակցել նրան, և նա, կանոնադրութեան 16-դ, 17-դ և 18-դ յօդուածներով համաձայն իրաւունք ունի կովկասի մէջ ամեն տեղ տեղակայւա վարչութիւններ և մասնա մօռդովներ կազմելու, որոնք կը վարեն ընկերութեան բոլոր գործերը իրանց վիճակի սահմաններէ մէջ: Տեղական վարչութիւններ հիմնված են արդէն, որքան մեզ յայտնի է, Ներսիս, Շուշի, Ախալցխա, Գորի և մինչև իսկ Կաղզուան: Իսկ այժմ կազմված է նաև Բաթումում: Եւ իրօք, ոչ մի քաղաք մեր երկրում, ազգային հասարակական կենքի տեսակէտով, այնքան կարօտ է այնպիսի ընդարձակ հիմանք վրա հաստատված մի ընկերութեան, որքան մեր քաղաքը: Բաթում թէև կամ իբրև նոր ծաղկելու

սկսած և դեռ ևս կատարելագոյն չը կազմակերպված քաղաք, զբաւում է բոլոր հայաբնակ տեղերի ուշադրութիւնը, այստեղ է, որ հաւաքված են և հետզհետէ հաւաքվում են ամեն գոյնի, ամեն վիճակի և դասակարգի հայեր, որոնց մէջ մեծ տեղ է բռնում մանաւանդ մշակ դասակարգը: Այս վերջինի կարօտութիւններն իրանց բնակած քաղաքի և շրջանի համեմատ աւելանում, և բազմապատիկ և բազմազան են լինում: Բաթում՝ միանգամայն իբրև զուգ կովկասի, անցք է տալիս ամեն տեղի հայերին, որոնց մէջ թշուառները և անօգնական պանդուխտներն աննշան բաժին չեն կազմում:

Մեր երկրի ամեն քաղաքից, ամեն գիւղից և ամեն անկիւնից հաւաքված հայազգիներն մէջ եղբայրութեան անձուկ յարաբերութիւնները մշակելու, համեմատելիս պահպանելու և նրանց մէջ դէպի իրանց կարօտեալ արիւնակիցները կարեկցութեան օրը զարգացնելու համար ամենալաւ միջոցն էր, աստարակոյտ, Բարեգործական ընկերութեան ճիւղի հիմնումը: Ըստ որում Բաթումի հայերն ուղ ղնելով թէ ընկերութեան նպատակին և թէ տեղական պահանջները անհրաժեշտ զոհացման կարեւորութեան, յոյս ունենք թէ լի համալրութեամբ կը վերաբերվեն դէպի տեղական ճիւղը և հոգ կը տանեն նրա բարդաւաճման: Նկատելով Բաթումի առևտրական պայմանները ընդարձակութիւնը և աշխուրդը, մենք, փոքր զոհաբերութեամբ ձեռք կարող ենք բերել այն, ինչ որ կովկասեան միւս քաղաքները համեմատաբար չեն կարող աւելի զօհողութիւն անելով: Բաթումի հայ հասարակութեան անդամները,

որոնք, պէտք է խոստովանվել, միշտ մեծ պատաստականութեամբ մասնակցած են և մասնակցում են թէ անհատ օրէն և թէ լրմ օրէն ամեն ազգօգուտ ձեռնարկութեան, նոյն և առաւել յօժարեալութեամբ կը նպաստեն ընկերութեան, որ նպատակ ունի հաւաքական ոյժով զօհացնել տեղական բազմադիւրի պահանջները:

Մի աղբարարութիւն սակայն, այս առիթը աւելորդ չենք համարում անել և յանձնել նոյն մեր հասարակութեան խորին ուշադրութեան: Զգուշացնում ենք Բաթումի հայերին՝ չը հեռանալ ընկերութիւնների գործունեութեան իրաւաբեկ լինելու, մեր մտաւոր կենտրոնը համարող քաղաքին, որտեղ, որքան լուծում ենք ու կարգում, գրեթէ ամեն ազգային ընկերութեան գործերում տիրում են անմիտ խառնակութիւններ, կազմվում են ընկերութեան նուիրական նպատակին բոլորովին անարժան, մանաւանդ թէ նրան խանգարող կուսակցութիւններ, որտեղ անդամների մեծագոյն մասը թելադրութեամբ այս կամ այն ազգային անձնավորութեան, փոխանակ միաբան ուղով ընկերութեան բարդաւաճման աշխատելու, փոխանակ ընդհանուր գործի յաշտութիւնը ամեն կրքով և նեղ հայանքից բարձր դասելու, ընդհակառակն կամ սպանիչ անտարբերութեամբ ջլատում են նրան և կամ մանաւանդ անձնական անտեղի հաշիւներից մղված միտմանց տակ փոս են փորում, և այսպիսով ընկերութեան վարկն ու գործունեութիւնը կտրուում, թէ իրանց և թէ զաւաճացնելու մէջ: Ոչ, զաւաճացնել պէտք է այսպէս չը վարվին. նրանց համար նշանակութիւն պիտի ունենայ միայն այն նպատակը, որ

իւր առաջացման համար հաւաքված են իրանք, նրանք պէտք է արմէջնեն և առաջ մղեն միայն այն վարմունքը, այն միջոցները, որ իրօք ընդհանուր գործին են ծառայում և կը ծառայեն:

Նպատակով անվերջ օգտակարութեան համարված համարալի գործակցութիւնը, որ երթալայ չէ նեղ կուսակցական նկատումներին, և ազատ է անձնական հաշիւների պատրանքից, ամենալաւ գրաւականը կարող է լինել մի ընկերութեան առաջադիմութեան: Ընկերութեան ամեն մի անդամ իր գործի, իր միջոցների ներածին չափ, պէտք է միշտ օգնէ նրա տարածմանը և զօրացմանը, ամբողջ ծանրութիւնը չը թողնելով վարչութիւնին վրա: Ընկերութեան անդամների այս յուսմամբ գործակցութիւնը և անդուլ աջակցութիւնը և աշխատութիւնը կը քաջալերեն տեղական վարչութիւնը, կաւելացնեն նրա գործելու եռանդը և կարգաբարձրեն իրանց վրա դրած յոյսերը:

Վերջացնում ենք մեր յօդուածը այն յօդով և վստահութեամբ, որ Բաթումի հայ հասարակութիւնը, առանց սեռի, վիճակի և կրօնի դասադասութեան, կը փութայ իր մասնակցութեամբ աւելացնել Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի ոյժն ու միջոցները, ստուարացնելով նրա անդամների թիւը, որոնց զօւմարն անցնում է արդէն 70-ը:

Ա. Սարուխանեանց

Այս երկու տարւոյ կարկուտի վնասը դեռ չառ չար խորհուրդներ կը ձնեցնէ ժողովրդի մէջ:

Բ.

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱՐՈՒՄ

Թիֆլիս, մայիսի 17-ին

«Վարագոյրի ետեր» վերնագրով իմ յօդուածները, որոնք տպագրվեցան «Մշակի» վերջին համարներում, շատ դաղել են այն մարդկանց, որոնք ձգտում էին լսելու քաղաքի շուկայում: Ապացոյց ձեռք պիտի, որ «Վարագոյրի» շարժաթիւնը ամենամեծ վայել կերպով հայտնուէ ինձ միմիայն այն պատճառով, որ ես չը կամենալով ծածկել ճշմարտութիւնը, ցոյց եմ տուել թէ ինչ է եղել վարագոյրի ետեր, և մատնանիլ եմ արել «Հրատարակական ընկերութեան» մայիսի 5-ի ընդհանուր ժողովի մի անկանոն վճռի վրա: Ես ասել էի, որ անկանոն է մի և նոյն ժողովում նոր հարց յարուցանել և մի և նոյն ժողովում մի այդ հարցը վճռել, ինչպէս այդ եղել է ընկերութեան քարտուղարին և գրապահին ռոճիկ նշանակելու վերաբերմամբ:

Եւ ահա այդ այս օրէն և կան ճշմարտութեան դէմ աղմուկ է յարուցանում «Վրձագանքը» պնդելով, որ ժողովի այդ վարմունքը միանգամայն արդարացի է: Սակայն շարժաթիւնը չարաչար սխալվում է: Առանց երկար ու բարակ բացատրութիւնների մէջ մտնելու, հարկ եմ համարում յայտնելու, որ այդ հասկանալի անկանոնութեան դէմ, բացի ինձանից, շատերն են բողոքել: «Հրատարակական ընկերութեան» 25 անդամները այս օրիւս մի յայտարարութիւն են ներկայացրել ընկերութեան վարչութեան, որի մէջ բողոքում են վերոյիշեալ անկանոն արարքի դէմ: Եւ ընկերութեան վարչութիւնն էլ իր մայիսի 11-ի նիստում, միանգամայն իրաւացի է գտել այդ բողոքը, համարելով, որ չէ կարելի և անկանոն է մի և նոյն ժողովում յարուցած հարցը նոյն ժողովում վճռել:

Ուրեմն ինչի վրա է հիմնել «Վրձագանքը» իր պատասխանը և իր անվայել ու կատաղի հայտարարները: Ինձ թւում է որ նոյն իսկ «Վրձագանքի» խմբագրութիւնը շատ լաւ է իմացել, որ ճշմարտութիւնը իմ կողմն է, բայց տպագրելով այդ բողոքը իմ դէմ, նա միայն մի նպատակ է ունեցել, — հայտնի նուաժան:

Դժուար արեցիք, խնդրում եմ, շարունակեցէք: Ես ինձ համար պատիւ եմ համարում «ազգային շինարարութեան» օրգանից հայտնաբեր ստանալը. «Վրձագանքը» չէ կարող չը հայտնի լինել. նա դաղ վաճ տեղեր շատ ունի...

Եւ այս տողերը գրելով, ես բողոքովն ի նկատի չեմ ունեցել «Վրձագանքի» հայտնաբերը, — որը ամբողջապէս պատիւ ունի ըստ պատկանե-

Արամեան դպրոցի հոգաբարձութիւնը նորոգ-վել է: Յոյս կայ, որ նորընտիր հոգաբարձութիւնը կարողանայ ազգային զործերը աջակցութեամբ առաջ տանել: Սրբազանը տեսչութիւնից հրա-ժարվեց, ուսուցիչները դպրոց բերվեցան: Նորըն-տիր հոգաբարձութիւնը մտադիր է հինգերորդ և վեցերորդ դասարաններ բանալ: Յոյս ունենք, որ անաչառութիւնը պիտի տիրապետէ այսուհետև ազգային գործերին, էլ դպրոցը խաղալիք չի լի-նի անխիղճ աղաների ձեռքին, որոնք այստեղի հասարակութեան ծոծը քամեցին, իւրաքանչիւր տարի նորանոր փոփոխութիւններ անելով: Տես-չութեան պաշտօնը, լսում ենք, որ պիտի յանձն-վի Աւագ-խան Աֆթանդիեանին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՆ

—Բերլինից հեռագրում են, որ Ումբերտո թա-գաւորի այստեղ եղած ժամանակ զաղաքի փո-ղոցներում վաճառում էին մշտական, որոնք կը-տրված են ի նշան Գերմանիայի և Իտալիայի դաշնակցութեան:

—Ինչպէս երևում է Պարիզից եկած հեռագրի-ներէից, որից օր շատանում է ցուցահանդիսին այ-ցելողների թիւը, մայիսի 8-ին այդ այցելողների թիւը հասաւ 79 հազարի:

—Մայիսի 9-ին Պարիզում տեղի ունեցաւ մե-նամարտութիւն (գոէ) Լօկուայի և «Lyon Républicain» լրագրի խմբագիր Լէ-Բերմի մէջ: Մենամարտութիւնը վերջապէս նրանով, որ Լօկ-ուայ ձեռքի վրա մի թեթիւ վէրք ստացաւ:

—«Presse» լրագիրը «Ան կէտեր» վերնագրով մի յօդուածում խոսելով Բալկանի գործերի վրա, ասում է, որ Սերբիայի և Բոսնիայի ներքին գործերը երկիւղալի կերպարանք չունեն: Լրագի-րը Բալկանի խառնաշփոթութիւնների զլլաւոր երկիւղը համարում է եւրօպական թիւրքիայի ներ-քին հանգամանքները, պնդելով, որ Բալկանի միւս պետութիւնները վտանգ չեն սպառնում խաղա-ղութեանը:

—Լոնդոնից գրում են, որ իբրև թէ գնեկալ Բուլանթէ ցանկացել է անդամ գրվել «Army and Navy Club» կոչված կլուբի, բայց ստիպված է ե-ղել յետ կանգնել այդ մտքից այն պատճառով, որ կէմբրիջի դուքսը յայտարարել է, թէ անտեղի է կլուբի անդամ ընդունել մի այդպիսի «խառ-նակիշ-յանդուգն գնեկալին»:

—Իտալիայի մի քանի քաղաքներում շարու-նակվում է գործադուլ լինել բանուորների մէջ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏԻԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մայիսի: Երէկ, Աննիկով պալատի մէջ տրված նախաճաշիցից յետոյ, Շահը, ցերեկվայ 2 ժամին, մեկնեցաւ Պետերբուրգից վարչապալի երկաթուղու գծով Շահին ճանապարհ-էին գցում կայարը, Թագաժառանգը և Մեծ Իշ-խանները: Հէնց երէկ Նոյա կայսերական Մեծու-թիւնները գնացին Գատչինո: Կայսրը յանձնեց Շահին իր պատկերը ազամանդներով զարդա-րված, կրծքի վրա կրելու համար՝ Անդրէեւիկան ժապաւնդով:

ԲԵՐԼԻՆ, 15 մայիսի: Իտալական թագաւորը թագաժառանգի և սվիտայի հետ միասին, երէկ երեկոյան դուրս գնաց Բերլինից:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 մայիսի: Ծովային կառուցա-նող մասնագործի անդամ գնեկալ Էյլէր նշա-նակված է այդ մասնագործի նախագահ: Պար-սից Շահի սվիտային Բարձրագոյն շնորհված են շքանշաններ և պարգևներ: Մեծ վիզիրին—Սպի-տակ Արծի շքանշանը, պետական խորհրդի նա-խագահին—Ս. Աննիայի I աստիճանի շքանշանը ազամանդներով, փոստերի և մամուլի միւնիստր-ներին և պալատական բժշկին—Ս. Աննայի I աս-տիճանի շքանշանը, միւսներին աւելի փոքր շքա-նշաններ և պարգևներ. ծառայողներին—մեղա-ներ և պարգևներ:

ԲՈՒՌՆԱ, 16 մայիսի: Անցեալ գիշեր ձերա-կալված է դործադուլ արած բանուորների ամբողջ մասնագործը, բարկացած աւելի քան 40 հոգուց, զրա հետ միասին բռնված են մասնագործի բո-լոր թղթերը:

ԼՕՆԻՍ, 16 մայիսի: Պարսից Շահը գալու է Լոնդոն յուլիսի 1-ին (ն. տ.) և այստեղ մնալու է 25 օր: Նրա համար բնակարան է պատրաստ-ված Բուկինգհամի պալատում: Լօրդ Սալսբուրի, լորդերի ժողովում նաւատորմը մեծացնելուն վե-րաբերեալ օրինագծի ըննութեան ժամանակ՝ աշ-խատում էր այն միտքը պաշտպանել, թէ պատե-րազմի ելկիւղ կայ, չը նայած այժմեան խաղա-ղութեան, և որ Անգլիան պէտք է հոգայ իրան այդ վտանգից զերծ պահելու համար:

ԲԵՂԳՐԱԴ, 16 մայիսի: Երէկ տեղի ունեցաւ առաջաւորների ժողովը ընտանոցների սկզբնու-մը: Ամբողջ գիտում էր սկզբի ներսում պատահած-ները: Երբ առաջաւորները գոցեցին՝ «կեցցէ Գա-րաշանին», ամբողջ լավեց լիորչի: Առաջաւոր-ները սկսեցին տարճանակ արձակել ամբողջ վրա, որը այդ բանին պատասխանեց քարեր զցելով և Գարաշանին վրա յարձակվելով: Գա-րաշանին տարճանակ արձակեց մի ղեկնաղիտի վրա, և մահացաւ կերպով նրան վիրաւորելով: Թագնեցի ներքին գործերի միւնիստրութեան մէջ, իսկ ամբողջ ջարդից Գարաշանին տան բոլոր ապակիները, նոյնպէս ջարդից և առաջաւորների կլուբի և «Վիզէլ» լրագրի խմբագրատան բոլոր կահկարասիները և ապակիները: Հաղիւ երեկոյան ղեկնաղիտը և ժանդարմները կարողացան ցրվել ամբողջ Տասն մարդ վիրաւորված է:

Կ. ՊՈԼԻՍ, 16 մայիսի: Լուսերին նայելով, կը-րիտէի աղբային ժողովը լինու. է կայացրել՝ Կրի-տէն Երեսնամանի հետ միացնելու մտքով: Այդ լուրը հաստատված է Կրիտէի ղեկնաղիտի բեր-դապետի հեռագրով:

ԲԵՂԳՐԱԴ, 16 մայիսի: Այսօր անկարգութիւն-ները վերանորոգվեցան: Մի քանի առաջաւորներ շատ ձեռնված են, երկուսը ծանր վիրաւորվեցան, մէկն էլ սպանված է: Երիտասարդութիւնը մաս-նակցեց Գարաշանին ձեռքով սպանված ղեկնա-ղիտի թաղման գործում: Երկիւղ են կրում, որ մեծ ցոյցեր կը լինեն: Այդ անկարգութիւնները նախամտածած դիտաւորութեամբ առաջ են բե-րել առաջաւորները:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 մայիսի: Հրատարակված է պետական խորհրդի վճիռը, որով թոյլ է տրվում Թուրքիայի զինեղա-նահանգապետին ուսուց-նապետակութեան ներքոյ ընդունել միջին-ասիա-կան խառնութիւնները հպատակներին, օրէնքի 1020 յօդուածով որոշված հիմունքներով, չը սահ-մանափակվելով այն պայմաններով պահպանու-թեամբ, որոնց նա անգործադրելի է համարում:

ՎԱՐՇԱՎԱ, 16 մայիսի: Պարսից Շահը երէկ այստեղ հասաւ Գնեկալ նահանգապետի մօտ հրաւեր կար:

ՎԻԵՆԱ, 16 մայիսի: «Fremdenblatt» լրագի-րը, Բերլինի տեսակցութեան առիթով, այն միտ-քըն է յայտնում, որ երեքպետեան դաշնակցու-թիւնը հիմնված է շահերի և նպատակների նոյ-նութեան վրա, և այդ պատճառով հէքիաթ պէտք է համարել այն լուրը, որ իբրև թէ Բերլի-նում դաշն է կապված Իտալիայի հետ, առանց Աւստրիայի մասնակցութեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մայիսի: Ֆինլանդիայի մեծ իշխանութեան մէջ Բարձրագոյն հրամայված է կազմակերպել զրազուներին մի գունդ և ստորա-գրել նրան Ֆինլանդիայի զօրքերի հրամանատա-րութեան: Չէրնօգորեան իշխանը նշանակված է 15-որդ ներթափից գունդի շէֆ:

ՊԱՐԻԶ, 17 մայիսի: Գաւառները դատապար-տեց Պէրէյնին, որը առճանակ արձակեց հան-րապետութեան նախագահի դէմ, չորս ամսվայ բանտարկութեան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ Մայիսի 17-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծեւ.	93	75
Բերլինի վրա 100 մարկ —	45	80
Փարիզի վրա 100 ֆրանկ —	37	17
Ուկի — արծեւ —	7	51
Մարսայի կուպոններ —	150	37
Արծաթ —	1	13
Բորսայի դիվիդենդներ —	5	6 1/4
Պետակ, բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	99	62
— — — — — 2-րդ —	99	50
— — — — — 3-րդ —	99	50
— — — — — 4-րդ —	99	50
— — — — — 5-րդ —	99	50
— — — — — 6-րդ —	99	50
Նոր 4% — — — — —	85	25
Արեւելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	99	75
— — — — — 2-րդ —	100	—
— — — — — 3-րդ —	99	75
Ներքին 5% առաջին փոխառութ.	271	50

Երկրորդ —	246	50
5 1/2% րէնտա	103	—
Ոսկեայ րէնտա	172	50
Եթերորդ կոնսոլիդ. փոխառ.	138	75
Նոր երկաթուղային րէնտա	99	87
5% զրաւական թղթեր կալուած.	—	—
Փոխ. կրեդ. ընկ. մետ.	137	25
— — — — — թղթադ.	94	50
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի	92	12
Կիւղական բանկի	102	75
6% գրաւ. թղ. Թիֆլիսի — 27 և 43 տ. —	—	—

— — — — — Գոթիայի — 18 և 43 տ. —	—	—
Ս. Պետերբուրգի քաղաքային օրդ-նացիների	95	37
Մոսկվայի քաղաք. օրդնացիների	94	50
Օդէսայի — — — — —	96	12
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրդ.	—	—
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնն հանդարտ է:	—	—

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

«ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԵՐԵՆ ԳՐԳԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՂ ԸՆԿԵՐՈՒ-ԹԵԱՆ» ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է հասարակութեան, թէ ընդունում է տպագրութեան համար ինքնուրոյն և թարգմանական զրաւոր երկեր: Կը տպագրվեն միայն այն երկերը, որոնք յարմար կը դառնան խմբագրական մասնագործից:

Հեղինակների առաջարկած պայմանները զրաւոր պիտի լինեն: Խմբագրական մաս-նագործի որոշմամբ տպագրութեան անյարմար դառնալով ձեռագրները յետ կուղարկ-վեն հեղինակներին:

Իրանց անունը յայտնել չը կամեցող հեղինակները կարող են որ և է կեղծ անու-նով և կամ նշանաբանով ստորագրել իրանց զրաւոր վաստակները, իսկ հասցէն (ըստ կարելոյն մանրամասն) պարտական են ուղարկել առանձին ծրարով ընկերութեան վարչութեանը:

Ընկերութեան վարչութեան հասցէն է. Тифлисъ, Правленіе Тифлискаго Обще-ства изданія армянскихъ книгъ. 1—3

ԱԼԲԵՐՏԻ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

(ժողովարանին կից)

Ստացված են մեծ քանակութեամբ ֆոթոստի ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ, վերջին կատարեղադրված սիստեմաների համեմատ, պուլվերիզատորով և առանց դրան: Գները շատ չափաւոր են, և մատչելի ամենքի համար:

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ե. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱՐՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Հինգշաբթի, մայիսի 25-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ ԲՕՇԵԼ (BOSCHEL)՝ դուրս կը գնայ Բաթումից՝ դէպի Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլս և Մարսել: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին, Բաթումում Լէմբոլուի տան, Նարեկէմայա, և Թիֆլիսում՝ Նախկին Ար-ժուրի գալլերէում, № 114.

2—2 (13. 18)

ՊՐՈԿԻՃՈՐ Ա. ՇՏԷԻՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐ

ԱՍԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓԶԱՆԱԼՈՒ ԴԵՄ

ՊՐՈԿԻՃԱՆ ԱՍԱՄՆԵՐԻ ԿԱԹԻԼՆԵՐ 50 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՊԱՑԻՆԵԱՆ ԱՍԱՄՆԵՐԻ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՍԱՄՆԵՐԻ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԻՍԻՈՐ ՊԱՀԵՍ.

ԹԻՖԼԻՍԻՄ՝ Կովկասեան զեղա-վաճառատան, և պ. պ. Շահ-պարտեանցի, Մակկերի, Անշի-կովսկու և Արմուրովի զեղա-տեսներում: ԲԱԳՈՒԻ մէջ, Բէկէլէրի մօտ, ԳՈՒԹԱՑԻՍԻՄ՝ Կօլօշեյի մօտ, ՍՏԱՎՐՈՊՈԼԻՄ, Բրոննօցկու մօտ և ԵԿԱԵՐԻՆՕՒԱՐՈՒՄ:



15—52 (Հ.)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԻՈՐ ՀԻՄՆԴԱՆՈՑ

(Կուկիա, Վորոնցովի արանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են աժեն օր

ԱՌԱՌՕՏԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—10—11 ժ. վիրաբուժական, (և առամնացալի), սիֆիլիսի և աչքի ց. բացի կերակի:

ՐՈՒԳԿՈՎԱԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց. ԿԻՆԻՍԿԻ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11 1/2—12 ժ. կանանց և երեխայոց ց. ԲԵՆԿԻՆԵՎՍԿԻ—11—12 ժ. ախանջի, կոկորդի, ջրի ց. և սիֆիլիսի: ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կերակի:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱՐՈՄՍԿԻ—5—6 1/2 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի. ԲՈՒԿԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայոց և ջլային ց. (էկեկտրօտերապիա): ԲԵՆԿԻՆԵՎՍԿԻ—6 1/2—7 1/2 ժամ.

Հիւանդանոցում է մանկաբարձուհի ԵՌՈՂԵՐ և ԵՐԼԱՆԵԿԱՆ: Վճար—50 կ. Համախորհրդի (Կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:

Հիւանդանոցի վերահստ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Յ. ՍՈՒՋԱՆԱՃԵԱՆԻ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԻԱՆՈՒԹՈՒՄ

(Թիֆլիսի Առետրական բանկի տակ)

Վաճառվում է պատահմամբ մի ՐՕՅԱԼ. 325 բուրդով և մի ամրիկական ՖՐՏԵՊԻԱՆՕ 225 բուրդով: Նոյն տեղ մեծ քանակութեամբ ստացված են նոստաներ Ռուսաստանի և Եւրօպայի երկերի հրատարակչներից: Օտարաքաղաքացիների պատուէրները ճշգրտութեամբ են կատարվում:

3—3